ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ԳԼՈՒԽ 13**
ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ»:

Հոդված 2. Օրենքի 88-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ենթակա են կատարման» բառերը փոխարինել «ենթակա են հարկադիր կատարման» բառերով.

2) 1-ին և 2-րդ մասերի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» բառերը փոխարինել «Կատարողական վարույթի մասին» բառերով.

3) 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացվում «Կատարողական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:».

4) 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ և 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026~~5~~ թվականի հունվարի ~~հուլիսի~~ 1-ից: